

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ  
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

2014թ. օգոստոսի 4

թիվ 77- Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ  
ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ  
ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի փետրվարի 4-ի N 11-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2014 թվականի հիմնական միջոցառումների պլանի 7.1.1 կետի պահանջները.

**ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝**

1. 2014 թվականի սեպտեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանում անցկացնել հրամանատարաշտաբային ուսումնալարժություն «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը ուժեղ երկրաշարժի դեպքում» թեմայով:
2. Ուսումնալարժությունը ընդգրկել՝ Արագածոտնի մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովին, մարզի տարհանման հանձնաժողովին, Արագածոտնի մարզային փրկարարական վարչությանը, ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի հիմնարկներին, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Հիդրոօդերևութաբանական և մոնիթորինգի պետական

ծառայություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության մարզային ծառայությանը, Աշտարակ համայնքի ղեկավար կազմին, մարզի զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին:

3. Սահմանել որ՝

- 1) ուսումնավարժության ղեկավար է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետը,
- 2) ուսումնավարժության ղեկավարի տեղակալ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալը,
- 3) ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ է հանդիսանում Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետը:

4. Հաստատել՝

- 1) ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի,
- 2) ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն N 2 հավելվածի:

5. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

- 1) ապահովել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 2014 թվականի օգոստոսի 25-ը ներկայացնել ուսումնավարժության ղեկավարի հաստատմանը,
- 2) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի,
- 3) մինչև սույն թվականի սեպտեմբերի 22-ը զեկուցել ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին,
- 4) ուսումնավարժության անցկացման ավարտից 5-օրյա ժամկետում արդյունքների ամփոփման արձանագրությունը ներկայացնել հաստատման:

6. Ուսումնավարժության մասնակիցներին՝

- 1) ճշգրտել համապատասխան պլանները,
- 2) ուսումնավարժության նախապատրաստման հարցերով համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ,
- 3) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ղեկավարին ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

7. Սույն կարգադրությունը հայտարարել ըստ առընչության:



Ս.ՍԱՀԱԿՅԱՆ

**ԿԱԶՄ**

**ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲ**

Ա.Մանուկյան- Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարարական ծառայության գնդապետ՝ շտաբի պետ,

Հ.Դարբինյան- Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի պետ, վարչության պետի տեղակալ, փրկարարական ծառայության փոխգնդապետ՝ խաղարկման խմբի ղեկավար,

Ա.Հակոբյան- Արագածոտնի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ, փրկարարական ծառայության փոխգնդապետ՝ վերլուծության խմբի ղեկավար,

Ա.Ստեփանյան-Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ, փրկարարական ծառայության մայր՝ վերլուծության խմբի անդամ,


Վ.Հարությունյան- Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի օպերատիվ հերթապահ հերթափոխի ավագ հրահանգիչ, փրկարարական ծառայության կապիտան՝ խաղարկման խմբի անդամ,

Վ.Առաքելյան- Արագածոտնի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ, փրկարարական ծառայության մայր՝ գործնական միջոցառումների խմբի ղեկավար,

Դ.Պետրոսյան- Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ, փրկարարական ծառայության մայր, փրկարարական աշխատանքների տեղամասի ղեկավար,

Ա.Շամիրյան- Արագածոտնի մարզային փրկարարական վարչության Աշտարակի հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատարի տեղակալ, փրկարարական ծառայության կապիտան, հրդեհաշիջման աշխատանքների տեղամասի ղեկավար:

«Արագածոտնի մարզպետարանի  
աշխատակազմի ղեկավար



**Օ Ր Ա Ց ՈՒ Ց Ա Յ Ի Ն Պ Լ Ա Ն**  
**ՀՐԱՄԱՆԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱՆ**

Հ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետը	Կատարման պատասխանատու	Նշումներ
1	2	3	4	5
<b>1. Կազմակերպչական միջոցառումներ</b>				
1.	Ելակետային տվյալների որոշում ուսումնավարժության մտահղացման մշակման համար	մինչև 01.08.2014թ.	ՀՇՈՒ ղեկավար	
2.	Խորհրդակցություն ուսումնավարժության փաստաթղթերի նախապատրաստման ուղղությամբ	մինչև 02.08.2014թ.	ՀՇՈՒ ղեկավարի տեղակալ	
<b>2. Ուսումնավարժության փաստաթղթերի մշակում</b>				
1.	Ուսումնավարժության մտահղացման մշակում	մինչև 07.08.2014թ.	ՀՇՈՒ ղեկավարման շտաբի պետ	
2.	Ուսումնավարժության զարգացման պլանի մշակում	մինչև 14.08.2014թ.	ՀՇՈՒ ղեկավարման շտաբի պետ	
	Իրավիճակի զարգացման պլանի մշակում	մինչև 20.08.2014թ.	ՀՇՈՒ ղեկավարման շտաբի պետ	
4.	Ուսումնավարժության փաստաթղթերի հաստատման ներկայացում	մինչև 25.08.2014թ.	ՀՇՈՒ ղեկավարման շտաբի պետ	
<b>3. Ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստում</b>				
1.	Ուսումնավարժության փաստաթղթերի ծանոթացում մասնակիցներին	մինչև 29.08.2014թ.	ՀՇՈՒ ղեկավարի տեղակալ	
2.	Ուսումնավարժության փաստաթղթերի առաքում	մինչև 02.09.2014թ.	ՀՇՈՒ ղեկավարի տեղակալ	

	մասնակիցներին			
3.	<<Հրշեջ Փրկարարական ջոկատի գործողությունները փլուզումների վայրերում>> թեմայով վարժանքների անցկացում	մինչև 18.09.2014թ.	Գործնական միջոցառումների խմբի ղեկավար	
4.	Անձնակազմին անվտանգության կանոնների հետ ծանոթացում	մինչև 18.09.2014թ.	Գործնական միջոցառումների խմբի ղեկավար	
5.	<<<< Արագածոտնի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլան>>-ի 3-րդ հավելվածի՝ <<Ուժեղ երկրաշարժի դեպքում Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլան>>-ի և <<<< Արագածոտնի մարզի բնակչության տարահանման պլան>>-ի ուսումնասիրում:	մինչև 19.09.2014թ.	ՀՇՈՒ ղեկավարի տեղակալ	
6.	Զեկույց ՀՇՈՒ-ի ղեկավարին ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին	մինչև 22.09.2014թ.	ՀՇՈՒ ղեկավարման շտաբի պետ	

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի  
աշխատակազմի ղեկավար




Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ